Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
գիտական խորհրդի 2025թ.-ի մարտի 6-ի
N1-03/25/6 որոշմամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ն.Ա.Միքայելյան

ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հետազոտական գործունեության քաղաքականության նպատակն է ստեղծել ամուր հիմքեր Շուշիի տեխնոլոգիական համալսարանի միջին մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ Քոլեջ) հետազոտական և կրթական գործունեության փոխկապակցման և ինտեգրման համար՝ ապահովելով տվյալ գործընթացների միասնությունը և շարակից կողմերի ներգրավվածությունը:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Հետազոտության և կրթական գործունեության միջև արդյունավետ և կայուն փոխգործունեության և տրամաբանական փոխկապակցվածության ձևավորումը, դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում:

2.2 Երիտասարդ մասնագետների վերապատրաստումների իրականացումը կրթության բազմաստիճան համակարգի հենքի վրա ինտեգրված կրթական կառուցվածքի շրջանակներում:

2.3 Ֆունդամենտալ և կիրառական աշխատանքների ժամանակակից մակարդակի ապահովումը, նորագույն արդյունքների օգտագործումը ուսումնական գործընթացումը:

2.4 Միջազգային ծրագրերի շրջանակներում հետազոտական նախագծերի իրականացումը՝ ակտիվ ներգրավելով դրանց մեջ ուսանողներին և դասախոսներին:

2.5 Հետազոտական աշխատանքների իրականացման ոլորտում միջազգային համագործակցության զարգացումը առաջատար գիտական կրթական կենտրոնների հետ:

3. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

Սույն քաղաքականությունը կիրառվում է Քոլեջի հետազոտական և կրթական ոլորտների վրա և ուղղված է դրանց փոխկապակցման գործընթացի իրականացմանը:

4. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտական և կրթական գործնեության փոխկապակցվածությունը ենթադրում է մի շարք գործընթացների իրականացումը, այդ թվում՝

-ուսումնական գործընթացի համակարգային թարմացում՝ օգտագործելով դեպարտամենտների, ամբիոնների նորագույն հետազոտությունները,

-ուսումնագիտական աշխատանքների տարատեսակ ձևերի կազմակերպում և անցկացում,

-դասախոսական կազմի և ուսանողների ներգրավում հետազոտական աշխատանքներին մասնակցելու համար, դասախոսների և ուսանողների կողմից կատարած հետազոտությունների և վերլուծությունների հիման վրա հոդվածների, զեկուցումների պատրաստում:

5. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Քոլեջի հետազոտական և կրթական գործընթացների փոխկապակցման գործընթացը պետք է երաշխավորի ՇՏՀ-ի հետազոտական գործունեության զարգացումը և կատարելագործումը:

Քոլեջը պարտավոր է ակտիվ ներգրավել ուսանողներին և դասախոսական կազմին կրթական և հետազոտական գործընթացներում և երաշխավորել, որ տվյալ գործընթացները փոխկապակցված են և իրականցվում են իրար համահունչ:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ն.Ա.Միքայելյան**

Գիտական քարտուղար՝ **Լ.Գ.Այդինյան**